



Երեց Ռոբերտ Դ. Հեյլս
Տասներկու Առաքյալների Քվորումից

Աստծո առաջ մեր պարտականությունը՝ ահող սերնդի հանդեպ ծնողների և ղեկավարների առաքելությունը

Մեր հրամայական պարտականությունն է՝ օգնել նրիտասարդներին անհատական խորը ձևով հասկանալ և համառոտ ապրելու սկզբնական:

Այսօր իմ ցանկությունն է խրախուսել ծնողներին և բոլորին, ովքեր կանչված են ղեկավարելու և ծառայելու այս աշխարհի երիտասարդներին: Տերը Չոզնֆ Սմիթին հայտնել է, որ մենք ունենք «մի հրամայական պարտականություն, որ մենք պարտական ենք աճող սերնդին» (Վեճ. 123.11):

Իմ կյանքի ընթացքում լինելով հայր և պապիկ ես խորհել եմ այն հարցի շուրջ, թե որն է Աստծո հանդեպ իմ *պարտականությունը*: Թույլ տվեք կիսվել, թե ինչ եմ սովորել անձնական խորհրդածության և վկայության արդյունքում:

Որպես ծնողներ և ղեկավարներ բոլորիս համար Աստծո հանդեպ

մեր պարտականությունը կատարելը սկսվում է օրինակելի ձևով ղեկավարելուց, տանը ավետարանի սկզբունքներով հետևողականորեն և ջանասիրաբար ապրելով: Դրա համար ամենօրյա վճռականություն և ջանասիրություն է պահանջվում:

Երիտասարդների համար չկա մեր առօրյա կյանքում ավետարանով ապրելու ավելի լավ օրինակ: Պատանի զինվորները չէին կասկածում իրենց ծնողների համոզմունքներին: Նրանք ասացին. «Մենք չենք կասկածում, մեր մայրերը գիտեին դա» (տես Ալմա 56.47–48): Արդյո՞ք մեր երեխաները գիտեն այն, ինչ մենք գիտենք:

Թռռնիկս մի անգամ ինձ խնդրեց իր հետ գնալ մի հանրաճանաչ,

սակայն ոչ պատշաճ կինոնկար դիտելու: Ես նրան ասացի, որ ես այդքան մեծ չեմ, որպեսզի այդ ֆիլմը դիտեմ: Նա տարակուսած նայում էր, մինչև որ տատիկը իրեն բացատրեց, տարիքային սահմանափակումը չի վերաբերում Պապիկին: Նա նորից ինձ դիմեց, ասելով: «Ես հասկացա, Պապիկ: Դու երբեք այդքան մեծ չես լինի, որ այդ ֆիլմը դիտես, այնպես չէ՞»: Եվ նա ճիշտ էր:

Բացի երիտասարդներին օրինակ ծառայելուց, մենք նրանց ղեկավարում ենք հասկանալով նրանց սիրտը և նրանց կողքով քայլելով ավետարանի ճանապարհով: Որպեսզի իրոք հասկանանք նրանց սիրտը, մենք պետք է անենք ավելին, քան պարզապես միևնույն սենյակում գտնվելը, միևնույն ընտանիքին և Եկեղեցու միջոցառումներին այցելելը: Մենք պետք է պլանավորենք և օգտվենք ուսուցման պահերից, որոնք խորը և տևական ազդեցություն են գործում նրանց մտքի և սրտի վրա:

Օրինակ, Եկեղեցու ղեկավարները կանոնավորապես պլանավորում են քահանայության միջոցառումներ և սկաուտական հավաքներ և ճամբարներ, սակայն արդյո՞ք այդ միջոցառումները միշտ իրենց բուն նպատակին են ծառայում: Ես իմացել եմ, որ տղայի համար քահանայության կամ սկաուտական միջոցառումը իմաստալից է դառնում ոչ միայն պատվավոր կրծքանշան ստանալու դեպքում, այլ նրբ հնարավորություն է ընձեռվում նստել և զրուցել իրենով և իր կյանքով հետաքրքրված ղեկավարի հետ:

Նմանապես, մայրեր և հայրեր, երբ երեխաներին մեքենայով կամ ոտքով տանում եք դպրոց կամ իրենց միջոցառումներին, արդյո՞ք նրանց ուղեկցելու այդ ժամանակն օգտագործում եք զրուցելու իրենց հույսերի, նրազանքների, վախերի և ուրախությունների մասին: Դուք ժամանակ գտնո՞ւմ եք, որպեսզի հանել տաք ականջակալները իրենց MP3 փոխարկներից և այլ սարքերից, որպեսզի լսեն և զգան ձեր սերը: Որքան շատ եմ ապրում, այնքան շատ եմ հասկանում, որ մանկության տարիներին ուսուցողական պահերի, հատկապես ծնողներիս կողմից



տարված ուսուցման շնորհիվ է ձևավորվել իմ կյանքը, և ես դարձել եմ այն, ինչ կամ:

Անհնար է գերազնահատել ծնողների ազդեցությունը, ովքեր հասկանում են իրենց զավակների սիրտը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կյանքի ամենակարևոր փոփոխությունների ժամանակ, ներառյալ այն ժամանակահատվածները, երբ երիտասարդների համար մեծ է Եկեղեցուց հեռանալու հավանականությունը, ամենամեծ ազդեցությունը գալիս է ոչ թե նպիսկոպոսի կամ այլ ղեկավարի հետ առանձնագրույցի, այլ ծնողների հետ մշտական, ջերմ, ընկերական, հոգացող շփման արդյունքում:

Դա ունենալով մեր մտքում, երբ մենք նստում ենք ճաշի սեղանի շուրջ, արդյո՞ք մեր ողջ ընտանիքն այնտեղ է: Ես հիշում եմ, երբ երիտասարդ էի, թույլտվություն էի խնդրում բնյսբոլ խաղալու ընթրիքի ժամին: «Ուղղակի դիր իմ ճաշը զագօջախի մեջ», - ասում էի մայրիկիս: Նա պատասխանում էր. «Ռոբերտ, ես իսկապես ուզում եմ, որ դու ընդմիջես, գաս տուն, ընտանիքի հետ միասին

ճաշես, և ապա կարող ես գնալ և բնյսբոլ խաղալ մինչև մութն ընկնելը»: Նա մեզ բոլորիս սովորեցնում էր, որ ընտանեկան ճաշը դա միայն ուտելիքը չէ, այլ հոգին սնուցող ընտանեկան շփումը: Մայրս ուսուցանում էր, որ մեծագույն սերը մենք տանն ենք պարզեցնում:

Որպեսզի երիտասարդների հետ մեր շփումներում իսկապես դիպչենք նրանց սրտերին, մենք պետք է նրանց հանդես ուշադիր լինենք, ինչպես վստահելի տարեց գործընկերոջ կամ մտերիմ ընկերոջ հանդես: Ամենակարևորը՝ պետք է նրանց հարցեր տալ, թույլ տալ, որ նրանք գրուցեն, և ապա պատրաստակամորեն լսենք, լսենք և լսենք, անգամ լսենք հոգևոր ականջներով: Մի քանի տարի առաջ ես թերթ էի կարդում, երբ փոքր թռչուններիցս մեկը բարձրացավ և նստեց կողքիս: Կարդալիս ես ուրախությամբ էի լսում նրա քաղցր թռչունաբանքը: Պատկերացրեք իմ զարմանքը, երբ մի քանի րոպե անց նա թերթը քաշելով մի կողմ հայտվեց իմ գրկում: Դեմքս առնելով իր ձեռքերի մեջ քիթը

հանլով քթիս հարցրեց. «Պապիկ, դու այստե՞ղ ես»:

Մայրիկներ, հայրիկներ, դուք այդտե՞ղ եք: Պապիկներ, տատիկներ դուք այդտե՞ղ եք: *Այդուհետ* լինել նշանակում է հասկանալ մեր երիտասարդների սրտերը և կապված լինել նրանց հետ: Կապված լինել նրանց հետ նշանակում է ոչ միայն գրուցել, այլև գործեր անել նրանց հետ:

Վերջերս ես լսեցի մի մոր պատմություն, թե ինչպես էր նա օգնել իր երեք դուստրերին կատարել իրենց Անձնական Չարագուր ծրագրի պահանջները անելով այն, ինչ իրենից է պահանջվում՝ մշտապես տեղեկանալով և ծրագրերը ստորագրելով: Այնուհետև, արցունքները այտերից հոսելով, նա քնքշորեն ասաց. «Վերջերս ես աշխատում էի չորրորդ դասերս հետ նրա հետ միասին կատարելով նրա ծրագրերը: Մեր կյանքը և մեր հարաբերությունները մեծապես բարելավվել են: Մակայն Օ՝, որքան տխրեցի, երբ հասկացա, թե ինչ եմ կորցրել այդպես չանելով իմ սյուս երեք դուստրերի հետ»: Լեզվի և գրչի արտահայտած ամենատխուր խոսքերն են. «Ես կարող էի լինել»:¹

Եկեղեցու չափահաս անդամները պետք է հասկանան, որ Անձնական Չարագուրը և Պարտականություն Աստծո առաջ ծրագրերի պահանջները պարզապես թեմաների երկար ցուցակ չեն նշում կատարելու համար: Դրանք անձնական նպատակներ են՝ դրված յուրաքանչյուր երիտասարդ տղամարդու և երիտասարդ կնոջ կողմից, որպեսզի օգնեն նրանց արժանի դառնալ տաճարի արարողություններ ստանալու, միսիա ծառայելու, հավերժական ամուսնություն կնքելու և վեհացումը վայելելու համար: *Մակայն Եկեղեցու ճիշտ հասկանալը՝ նախ երիտասարդ տղամարդկի և երիտասարդ կանանց փորձեն միասնակ իրականացնել իրենց նպատակները, դա կլինի մեծ կրթական և ուղեորություն:*

Հայրեր, մայրեր և երիտասարդների ղեկավարներ, մենք խնդրում ենք ձեզ՝ ձեր երեխաների և երիտասարդների հետ միասին մասնակցեք Անձնական Չարագուր և Պարտականություն Աստծո հանդես

ծրագրերին: Ոչ միայն նրանք կաճեն, այլ դուք ևս կաճեք: Իսկ ամենակարևորն է, որ դուք միասին կաճեք հավատի և ընկերության շրջանակում, որը կօգնի ձեզ ամրապնդել միմյանց և հավերժ մնալ ավետարանի ուղու վրա, լինել իսկապես հավերժ ընտանիք:

Աստծո հանդեպ մեր ծնողական պարտականությունը կատարելու հավասարապես կարևոր մասն է մեր երեխաներին ավետարանն ուսուցանելը և Փրկչի վերականգնված Եկեղեցուն լիարժեքորեն մասնակցելուն նրանց պատրաստելը: Հիշեք Բենիամին թագավորի ժողովրդի դասը: Այդ ուսուցման արդյունքում, մեծերից շատերը սրտի հզոր փոփոխություն կրեցին (տես Մոսիա 5.2): Սակայն հետո այն ասում է, որ «աճող սերնդից կային շատերը, ովքեր չէին կարողանում հասկանալ Բենիամին թագավորի խոսքերը՝ լինելով փոքր երեխաներ այն ժամանակ, երբ նա խոսել էր իր ժողովրդի հետ ... Եվ նրանց սրտերը կարծրացած էին» (Մոսիա 26.1, 3):

Մեր *հրասանցական պարտականությունն է՝* օգնել երիտասարդներին անհատական խորը ձևով հասկանալ և հավատալ ավետարանին: Մենք կարող ենք ուսուցանել նրանց լույսով քայլել, սակայն այդ լույսը հնարավոր չէ փոխ առնել: Նրանք պետք է ինքնուրույն այն վաստակեն: Նրանք պետք է ստանան իրենց անձնական վկայության լույսը անմիջապես հոգևոր լույսի աղբյուրից՝ Աստծուց՝ աղոթքի, ուսումնասիրության և մտորումների միջոցով: Նրանք պետք է հասկանան, թե ով են իրենք և ինչ է ուզում Երկնային Հայրը, որ իրենք դառնան: Ինչպե՞ս պետք է օգնենք նրանց:

Երբ ընտանեկան երեկո, ընտանեկան խորհուրդ կամ մեր երեխաների հետ ավետարանի շուրջ իմաստալից գրույց ենք անցկացնում, մենք հնարավորություն ունենք նայելու նրանց աչքերի մեջ և ասել, որ սիրում ենք իրենց, և որ Երկնային Հայրը սիրում է իրենց: Այդպիսի սուրբ մթնոլորտում մենք կարող ենք նաև օգնել նրանց հասկանալ, խորը իրենց սրտում, թե ով են իրենք և որքան բախտավոր են, որ եկել են այս երկիր և մեր տուն, և մասնակցել

այն ծեսերին, որոնք մենք կատարում ենք տաճարում հավերժ ընտանիքներ լինելու համար: Ամեն անգամ նրանց հետ շփվելիս, մենք ներկայացնում ենք ավետարանի սկզբունքները և օրհնությունները:

Այս վտանգավոր ժամանակներում մեր երիտասարդների համար միայն *խնամալիր* բավարար չէ: Նրանք պետք է *գործեն*: Արարողություններում, քվորումներում և օժանդակ կազմակերպություններում, ոգեշնչված ծրագրերում և ամրապնդող միջոցառումներում ամբողջ հոգով անկեղծորեն մասնակցելը օգնում է երիտասարդներին հագնել Աստծո ողջ սպառազինությունը: Կօզեն՞ք նրանց հագնել այդ սպառազինությունը, որպեսզի կարողանան դիմակայել հակառակորդի կրակոտ նետերին: Իսկապես Տիրոջ ուղին ընտրելու համար, նրանք պետք է իմանան Նրա ուղին: Իսկ Նրա ուղին իսկապես իմանալու համար մենք պետք է ուսուցանենք և առաջնորդենք նրանց՝ գործելու, մասնակցելու և կատարելու:

Ամենամեծ միսիոներական աշխատանքը, որ երբևէ կկատարենք, կլինի մեր տները պատերի ներսում: Մեր տները, քվորումները և դասարանները միսիայի մասն են: Մեր երեխաները և թոռները մեր ամենակարևոր ունկնդիրներն են:

Մեծագույն ընտանեկան պարտության աշխատանքը, որ երբևէ

կկատարենք, կլինի մեր տների պատերի ներսում: Դա մեր երեխաների՝ աճող սերնդի հոգևոր պատրաստությունն է, որը, հնագանդության շնորհիվ, կպարզևի հավերժական պահպանում և շարունակելիություն մեր ընտանիքների համար ապագայում:

Մեծագույն փրկությունը, մեծագույն ակտիվացումը կլինի մեր տների պատերի ներսում: Եթե ձեր ընտանիքից ինչ-որ մեկը մոլորվել է օտար ճանապարհներում, դուք փրկարար եք՝ ներգրավված Եկեղեցու մեծագույն փրկարարական աշխատանքում:

Ես վկայում եմ իմ անձնական փորձից: Չախտողում չի լինի, եթե անձնատուր չլինեք: Սկսելու համար երբեք շատ շուտ կամ շատ ուշ չէ: Մի անհանգստացնեք անցյալում կատարվածի համար: Չանգահարեք, գրություն գրեք, այցելություն կատարեք, հրավիրեք տուն: Մի վախեցնեք կամ մի շփոթվեք: Չեր երեխան Երկնային Հոր գավակն է: Դուք Նրա աշխատանքում եք: Նա խոստացել է հավաքել Իր գավակներին, և Նա ձեզ հետ է:

Ամենամեծ հավատքը, որ ունենք, կլինի մեր տան պատերի ներսում, եթե մենք ուժեղ մնանք ծնողական փորձությունների և դժվարությունների մեջ:

Մայրերի մի փոքր խմբի Նախագահ Մոնսոնը վերջերս ասել է. «Երբեմն մենք հապճեպ դատողություն



ենք անում մեր հաջողությունների և ձայնողումների վերաբերյալ»: Ես կավելացնեի, մի նայեք այսօրվա փորձություններին որպես հավերժական: Երկնային չոր գործը երկարաժամկետ է: Մարգարե Չոզենֆ Մաիթն ասել է. «Շատ բաներ կան, որ սպասվում են ապագայում: Հետևաբար ... եկեք ուրախությամբ անենք ամեն բան, որ մեր ուժի սահմաններում է. և հետո, թող մենք կանգնենք հանգիստ, ամենայն համոզվածությամբ՝ տեսնելու Աստծո փրկությունը և նրա բացահայտվող բազուկը» (Վեռն 123.15, 17):

Այս Չատիկի Կիրակի, ես հույս ունեմ, որ մենք հնարավորություն կունենանք բերելու մեր վկայությունները, որ մենք գիտենք, որ Աստված ապրում է և որ Հիսուսը Քրիստոսն է: Ես հույս ունեմ, որ մենք կբերենք մեր վկայությունները, որպեսզի մեր ներխաճանքը իմանան, թե որտեղ են մեր սրտերը և որ մենք սիրում ենք նրանց: *Մեծագույն սերն ու մեծագույն ուսուցումը պետք է լինեն մեր տներում:*

Ես խնդրում եմ, որ Տիրոջ օրհնությունները լինեն ծնողների և ներհասարակների հետ, որոնք մեծանում են հավատքով լի տներում, որ նրանք հասկանան, թե ինչ ուրախություն է լինել ընտանիքում, որտեղ կարող են իրենց սիրված զգալ, ուղղություն ստանալ և առաջնորդվել: Իմ աղոթքն է, որ մենք լինենք հավերժական ընտանիքներ և հավերժ միասին Հայր Աստծո և Նրա Որդի՝ Հիսուս Քրիստոսի ներկայության մեջ:

Ես իմ հատուկ վկայությունն եմ բերում, որ Հիսուս Քրիստոսն ապրում է: Նա կորած ոչխարների հովիվն է, մոլորված հոգիների փրկարարը, վիրավորված սրտերի բժիշկը, ողջ մարդկության հույսը: Որպես մեր Վարդապետ Նրա հետ եկեք կատարենք Աստծո հանդեպ մեր պարտավորությունը՝ հավատքով առ Նա և Նրա հավերժական սերը մեզանից յուրաքանչյուրի հանդեպ, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՍ

1. See “Maud Muller,” *The Complete Poetical Works of John Greenleaf Whittier* (1876), 206.



Երեց Բրնդի Դ. Ֆոսթեր
Յոթանասունից

Մայրիկն է ինձ ասել

Միգուցե, մենք բոլորս այդ կերպ ենք պատասխանում մեր մայրերի սիրուն, որովհետև այն մայրնապրում է մեր Փրկչի սերը:

Տերը կարևոր պատասխանատվություն է տվել ծնողներին իրենց զավակներին հոգևոր սնուցում տալու համար: Երբեմն այդ պատասխանատվությունը ընկնում է միայնակ ծնողի վրա: Մայրս համեմատաբար երիտասարդ էր, երբ հայրս մահացավ, թողնելով նրան միայնակ չորս երեխաների հետ: Սակայն նա հավատքով և քաջությամբ դիմակայեց դժբախտությանը, խոստանալով մեզ, որ եթե մենք մնանք ճշմարիտ ուղու վրա, վերջում ավելի լավ կլինի, քան սկզբում: Մորմոնի Գրքի քաջարի մայրերի զավակների պես, «մենք չկասկածեցինք, մեր [մայրը] գիտեր դա» (Ալմա 56.48): Եղբայրներ և քույրեր, ես իմ մաշկի վրա եմ զգացել, որքան մեծ ազդեցություն են թողնում մայրերը:

Իմ մոտ ընկեր Դոն Փիրսոնը մի անգամ կիսվեց իր փորձառությամբ, որը ցույց է տալիս այդ ազդեցությունը: Մի երեկո, իր չորսամյա որդին, Էրիկը, խնդրում է նրան իր համար գիրք կարդալ: Էրիկն ընտրել էր իր սիրելի գիրքը՝ *Փառի Փորթի օղապարհիկով սրկածները*: Դա պատմություն է մի ընտանիքի մասին, որն ապրում էր ծովի կղզիների վրա և օդապարհով ճամփորդում մի կղզուց մյուսը: Գիրքը նկարագարո էր, տեքստ չկար, այնպես որ Եղբայր Փիրսոնը

իր խոսքերով սկսեց պատմել այն: «Փառին օդապարհիկով իջնում է կղզու վրա: Նա օդապարհիկի կողքից թռչել իջեցնում է ներքև»:

Էրիկն ընդհատեց նրան. «Հայրիկ, ոչ թե թռչ, այլ *սրսրան*»:

Եղբայր Փիրսոնը նայեց Էրիկին և ապա գրքի նկարին, և շարունակեց. «Փառին դուրս է գալիս օդապարհիկից և ծառից իջնում: Օ՛, ոչ, նրա վերարկուն կառչել է ճյուղից»:

Էրիկը կրկին ընդհատեց նրան. «Հայրիկ, ոչ թե վերարկու, այլ *բաձկն*»:

Այդ ժամանակ Եղբայր Փիրսոնն անհանգստացավ և, Դիմելով, տղային ասաց. «Էրիկ, այս գրքում բառեր չկան, միայն նկարներ են: Ինչո՞ւ ես պնդում, որ դա բաձկն է»:

Էրիկը պատասխանեց. «Որովհետև մայրիկն է ինձ ասել»:

Հայրը փակեց գիրքը և ասաց. «Էրիկ, ինչ ես կարծում, ո՞ւմ խոսքն է հիմնականում անցնում այս տանը»:

Այս անգամ Էրիկն ուշադիր մտածեց և պատասխանեց. «Քոնը, հայրիկ»:

Եղբայր Փիրսոնը ժպտաց որդուն՝ ինչպիսի՜ բացառիկ պատասխան: «Որտեղից գիտե՞ս», հարցրեց նա:

Էրիկն արագ պատասխանեց. «Մայրիկն է ինձ ասել»:

Ինչպես նախագահ Չեյմս Ի. Ֆաուստն է ասել. «Մայրության մեջ է